34. ԴՅՈՒՆՅԱ ԳՅՈԶԱԼԻ

Մե թագավորի մեկը մե մանչ կունենա։

Կըսե կը.— Ես կը մեռնիմ, հեսիաթ կէնեմ քեզի, օր չէրթաս, Դումանլու սարը, էդտեղ էրթողը սաղ չի գա։

Թագավոր տղին կուտա կը դպրոց կարթումի համար։

Տղեն մեծնա կը, հերը կը մահանա, ինք կէղնի թագավոր։

Էս տղեն իր ասքրին կըսե կը.— Ելենք էրթանք Դումանլի դաղ ավզուշի։

Գելնին կէրթան։ Էն օրը սարի մեջ մե ջեյրանըմ ռաստ գուքա։

— Հա, ղուրբան եմ ձեզի,— կանչե կը թագավորի տղան,— ղայրաթ էրեք օր էդ ջեյրանը բռնենք։

Ջեյրան փախի կը, փախի կէրթա մաղարեմ, էլ չեն կրա բռնե։

Վերջը կըսե.— Դառնանք էրթանք մեր սենյակը նըստինք՝ վաղը դուքանք։

Առավոտուն հրաման կէնե.— Ելեք էրթանք օր էդ ջեյրանը բըռնենք։

Կը հեծնին առավոտուն, կէրթան էդ ջեյրանին ռաստ գուքան։

— Դե՛, ղուրբան եմ ձեզի,— կըսե,— ջեյրանը բռնելու աշեք։

Կէրթան, կէրթան, ջեյրանը չեն կրա բռնե՝ փախի կը։

Էստեղեն իրեն ձիավորը փախի կը ետ, կը մնա մեննակ թագավորի տղեն։

Մեկ դավրիշըմ էնտեղեն գելնե. էդ դավրիշը գուքա թագավորի ձիու գիղգինը[1] կը բռնե, կ'առնե կ'էրթա, մաղարեմ կը տանի։

Էստեղեն էդ մարթը տանի կը ներս, ձին կը կապե դուսը, կըսե կը.— Թագավոր, արի էրթանք մեր տունը։

Տանի կը էդտեղ։ Դավրիշը կը մտնի մաղարեն, կորի կը։

Էս հեղին թագավորը կէրթա մե դուռըմ կը զարկե։

Զարկե կը քիմի դուռը կը բացվի։ Կաշե օր ներսը մե ռունգ ախչիկըմ։ Ախչկան մեկ աչքեն արուն գուքա, մեկ աչքեն արտրսունք։

Կ'ըսե կը.— Իսան օղլի, դու ինչի՞ էկար էստեղ ելար։ Հալա մեկ արի էրթանք էնտեղ հորըմ կա։ Բա'ց աշե, տես ի՞նչ կա մեշը։

Թագավոր հորի բերան բանա կը, կաշե օր մեշը սագա խնսնի ջանդակ։

Ախչիկը կ'ըսե.— Ի՞նչրխ դու խըլըսիս պիտի, իսան օղլի, քեզի դավրիշը կը սըպանե։ Էստեղ մե թուրըմ կա, գավրիշ հ'իրիկվան գուքա, կարա՞ս մե թուրըմ ձրգես դավրիշ սըպանես, օր համ դու խըլըսիս, համ ես։

Դավրիշը կէղնի օր հ'իրիկվան գուքա։ Տղան պահվի կը գռան ետևը մութ տեղ։ Դավրիշը գալուն քիմի թուրը ցրգե կը՝ դավրիշը կը սըպանե։

Դավրիշն օր կիսամեռ կէղնի, կըսե կը.— Մեմ էլ զարկ, իսան օղլի։

Կ'ըսե կը.— Ես մորես մեմ եմ էղե։

Ախչիկը քննե կը էդոր, կըսե կը.— Դու ի՞նչ մարթ ես։

Կ'ըսե կը.— Ես թագավորի մանչն եմ։

Կ'ըսե կը.— Արի էրթանք, էնտեղ մե գուռըմ էլ կա։

Դուռը կը բանան, կաշեն օր մեշը լիքը փարա, էս հեղին կըսե կը.— Ախչի՛, հետս գուքա՞ս, թե ես մինակ էրթամ։

Ախչիկը կ'ըսե.— Է, դու հ'ո՞ւր պիտի էրթաս։

Կ'ըսե.— Ես պիտի էրթամ աշխրքի ճոթը պիտի գտնեմ։

Էս հեղին ախչիկը կ'ըսե.— Ես քեզ հետ չեմ գա, ես քուկդ եմ, դու.իմս ես, ես հոս կը կենամ, իմ պատրաստությունս հոս թող, ես հոս կը կենամ դու գնա՛, աշխարհ ժուռ էկի, էկե էստեղ՝ ընձի գտի, օր ես հետև առնեմ քեզի։

Էս մանչը գելնի կ'ըսե կը.— Արթրխ մնաս բարով։

Ախչիկը կըսե կը.— Դավրիշի թուրը կապե վրեդ։

Թուրը կը կապե վրեն, կէրթա ձիով։ Կէրթա, կէրթա ջադդեի օրթալըղը մե գևրմ ռաստ գուքա։

Կէրթա կաշե կը օր դևը պառկել է, կը տքա։

[1] Սանձ (Ս. Բ.)։

Կ'ըսե կը.— Հ'իսան օղլի, էսման հ'ո՞ւր կէրթաս։

Կ'ըսե կը.— Ես կէրթամ, օր Դյունյա Գյոզալի կա, գտնիմ պիտի։

Կ'ըսե կը.— Իսան օղլի, իմ օտաց վըրեն չիպանըմ կա՝ ես օն-նիչուն[1] կը տքամ, չես կարա՞ փլցնե։

Քաշե կը իրեն թուրը, չիպանը կտրե կը, էստեղեն դևը կըսե կը.— Ես ոհաթցա, ուզե՛, մուրազըդ տամ։

Կ'ըսե կը.— Մուրազըս էն է, օր ճամբեն խրատ տաս։

Էն է, կանչե կը իրեն տղոցը դևը։ Դևի տղեն զըյնի առաջը, տանի մեկել ախպոր քովը, կ'ըսե կը.— Ամի, էս մարթուն մուղաթ կեցի, էս մարթը իմ հորըս ազատեց։

Կ'ըսե կը.— Լավ, քանի օր դու իմ ախպորըս ազատել ես, ես քեզի արթըխ խլըսեցնեմ,— Կ'ըսե կը,— մուրազըդ ի՞նչ է քու։

Կ'ըսե կը.— Իմ մուրազըս է՛ն է, ընձի տանիս՝ Դյունյա Գյոզալի կա, էնոր քով պիտի տանիս ընձի։

Կ'ըսե կը.— Օղուլ, դու օր էնտեղ էրթաս՝ չաթին կազատվիս։ Դու չաթին տեղ ընձի կապեցիր։ Արթըխ վերաղարցի, քու երկիրդ վե՞րտեղ է՝ էնտեղ դարցիր։ Մեղք ես, դու էրթաս էնտեղ՝ քեզի վնասեն կը։

Տղեն կ'ըսե կը.— Չէ, կէրթամ, կեցիք բարով, էն օր դուք չեք դա ընձի հետ, ես մեննակ կէրթամ՝ մեռնիմ էլ։

Էսիկ դըյնի ճամբեն, մեննակ կէրթա մե չորնիմ քով։

Զորանը կ'ըսե կը.— Հ'ո՞ւր կէրթաս։

Կ'ըսե կը.— Ցիլան քաղաքը ես կէրթամ կը։ Իմ հալավըս քեզի, քու հալավըդ ինձի տուր, օր մարթ չի ճանչե ընձի։

Զորանը հալավը կուտա՝ փոխեն կը։ Կէրթա դեմի քաղաք։

Էդ քաղքի մեջ կէրթա կնկա մեկի քովը։ Կ'ըսե կը.— Ճամբները ընձի խրատե, ես ղարիբ եմ։

Կնիկը կ'ըսե.— Արի՛ էրթանք մեր տուն։

Մեկ-էրկու օր մնա կը էդ կնկա տունը։

Կնկան կըսե կը.— Էստեղ մե Դյունյա Գյոզալիմ կա, ես էկա օր առնեմ։

Էն էլ կ'ըսե.— Օղուլ, սաբախտան թագավորը շենլիքը թոփ կէնե կը օր իրեն պալատի դրռնեն անցնին։ Ում օր թագավորի ախչիկը հավնավ՝ էնոր խնձորըմ զարկե կը, թե. «Ես էս մանչը կառնեմ»։

Առավոտ թալալ կը կանչե, կանցնի կը շենլիքը թագավորի պալատի առջևեն, Դյունյա Գյոզալին փանջարից կաշե կը, խնձորով զարկե կը էդ մանչուն։

Մանչ էստեղեն գելնի կէրթա իր տեղը։

---

[1] Նրա պատճառով (Ս. Բ.)։

Թագավորը կանչե կը իր լալեստանց, կըսե կը.— Իմ ախչիկըս ո՞ւմ հավնավ։

Կ'ըսեն կը.— Մե ղարիբ մանչում հավնավ։

Կ'ըսե կը.— Էդ մանչը դուք ճանչե՞ք կը։

Կ'ըսեն կը.— Մե կնկամ տունն է էդ մանչը։

Բերեն կը մանչուն, կաշեն՝ կ'ըսեն.— Դու հ'ո՞ւրգից ես։

— Ես,— կ'ըսե կը,— այսինչ երկրացի եմ։

Ախչկան կ'ըսեն կը.— Մենք քեզ էս մանչուն չենք տա, դու թագավորի ախչիկ էղնիս՝ էրթաս աղքտի՞ն առնես։

Մանչուն դուս կէնեն էդ քաղքեն, ուրիշ տեղըմ տանին կը դնեն, մե բայաղի[1] հօդեմ։

Խորուրթ կէնե թագավոր իրեն վեքալեստանց հետ։

Կը'սե կը թե.— Էսի ի՞նչի պիտի էղնի։ Մեղի գեվլաթ ղուշի կա՝ թողնենք, ում գուռն օր իշավ՝ էնոր կուտանք էս ախչիկը, էնոր էլ բան չենք կրնա ըսե։

Դեվլաթ ղուշին վեր կը թողնեն՝ կէրթա կը մանչու էրթքի վերեն գիշնի։ Էս հեղին ախչկան կ'ըսեն կը.— Դու էդ մանչուն կառնե՞ս։

Կ'ըսե կը.— Հա', կառնեմ։

Ամա չեն գիտեր, թե թագավորի տղա է։

Էս ախչիկն էդ մանչուն կառնի կը։ Պալատից դուս կ'էնեն, կառնի կ'էրթա կը քաղաքեն ղուս։

Մանչ իրեն համար ղոնաղ շինել կուտա։

Ետքը մանչը գնաց էն մեկել կնկա հետև։

Բերե կը, էդտեղ էրկու կնիկն էլ պսակե կը վրեն, ղոնաղներ շինե կը, լավ կապրի։

Թագավոր կըսե կը լալեստանց.— Էրթանք տեսնանք էս մանչ ի՞նչըխ մանչ է։

Գուքան կը տեսնեն օր առշի կնիկը մանչու թագավորական հալվընները բերեր է, տեսնի կը ու կ'ըսե կը.— Էս ի՞նչըխ մարթ էղել է։ իսման շնորք ունի, իսման թագավորի ցեղ է, մենք չիտեինք։

Արթըխ կանչե կը էդ մարթուն, հարսնիքը կէնե։

— Ասկից հ'ետև, կըսե կը,— քուկդ է իմ թագավորություն, դու ի՞նչըխ կ'էնես երկրի վերեն՝ էրա, դու թագավոր էղի։

Իրենց մուրազին հասան մարթիքը։

---

[1] Հասարակ (Ս. Բ.)։